

կիրիոյ ժողովը (314), այժմ բոլորովին ջնջուած, 2. Անկախի ժողովը (272), այժմ գոյութիւն ունի, բացի վարի մասէն ուր քանի մը գիրեր ջնջուած են, 3. Սարդիկի ժողովը (347), տակաւին այժմ տեսանելի, բացի վարի կողմէն ինկած քանի մը գիրերէն, 4. Գաւգրայ ժողովը (Դ. դար), բոլորովին ջնջուած, բովանդակութիւնը պահած է Գուարէզմիոս, 5. Լառոյիկի ժողովը (Դ. դար), բոլորովին ջնջուած, 6. Կարդագիւնի ժողովը (254), բոլորովին անյայտ: Իւրաքանչիւր տիեզերական և մասնաւոր ժողովներուն համառօտութիւնը նշանակուած էր մոզայիքներուն մէջ:

Այցելուն որչափ կը մօտենայ Ս. Այրին՝ կրօնական ծանօթութեանց չըջանալը կը կատարելագործուի: Հարաւային կողակին մէջ այցելուն կը տեսնէր Փրկչին ձեռնարկ մոզայիքը որ շինուած էր բիւզանդական ոճով: Գուարէզմիոս ղեռ իր օրով կը տեսնէր այս պատկերին մէկ կտորը, որուն վրայ շինուած էր նորածինը լուացող մանկաբարձին պատկերը ու անոր ամբողջ արձանագրութիւնը: Նոյնին մէկ կողմը կը գտնուէին Մուգերու երկրագործիքներ և Մոգերուն վերայարձը հրեշտակին առաջնորդութեամբ: Հարաւային կողմը կային նաև Յիսուսի Չարչարանաց, Յարութեան և Համբարձման մոզայիք պատկերները: Դասին կեդրոնական մասին հարաւը կար Ընծայումն ի Տանար, հիւսիսը՝ Պեկեկուսիկ և Ս. Կուսիկ քաղաքը, արևելեան կողակին մէջ Անեսուրը, Մարիամը ձախին և հրեշտակապետը աջին՝ Ս. Գաբրիէլ անուշով: Մեծ կամարին կեդրոնը կը գտնուէր Տիրամօր մէկ պատկերը, և անկիւնակալներուն մէջ՝ Աքրահաւնա և Դալիթ Մարգարիկի պատկերները: Միւնոյն տեղոյն մէջ պատմական այս մոզայիքներուն տակը կան մին լատիներէն և միւսը յունարէն երկու արձանագրութիւններ, որոնք կը հաստատեն թէ այս մոզայիքներ եւ նկարներ ե⁶րբ շինուած են եւ որո⁶ք շինած են: Հոս կը գնենք անոնց թարգմանութիւնը:

«Ամօրի թագաւոր, պահապան առաքինութեան, բարեկամ առատաձեռն, ընկեր համեստութեան եւ թշնամի ամբարշտութեան, սիրող արգարութեան և բարեպաշտութեան, վրէժխնդիր մեղաց, կ'իշխէր իբրև հինգերորդ թագաւոր. էմմանուէլ՝ վեհանձն նուիրատու և կայսր բարեպաշտ, հրամանատար Յունաց. հոս կ'ապրէր եւ եկեղեցին կը կառավարէր բարեպաշտն»